



ք. Երևան, 04.09.16 թ.
Ելք № 035

ՀՀ ԿԱ ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ
ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ
պրն. Հ. ՀՈՎՍԵՓՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Հովսեփյան

Հայտնում ենք Ձեզ, որ դեռևս 2014 թվականի հոկտեմբերի 29-ի թիվ 025 գրությամբ «Հարկ վճարողների պաշտպանություն» հասարակական կազմակերպությունը դիմել էր ՀՀ ֆինանսների նախարարություն՝ հայտնելով, որ տարածքային հարկային տեսչությունների կողմից հարկ վճարողներին հեռախոսազանգերի միջոցով և (կամ) փոստի միջոցով ուղարկված ծանուցագրերով հարկ վճարողների պաշտոնատար անձիք հրավիրվում են տարածքային հարկային տեսչություններ՝ հաշվետվությունները սահմանված ժամկետից ուշ ներկայացնելու համար վարչական վարույթ սկսելու կամ վարչական պատասխանատվության ենթարկելու համար նույնիսկ այն դեպքերում, երբ առկա չէ իրավախախտման դեպքը (հաշվետվության ներկայացման պարտավորություն չունենալու պատճառով) կամ ծանուցումներ վերաբերում են 3 ամսից առաջ կատարված իրավախախտումներին:

Պատասխան գրությամբ ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս իրավաբանական վարչության պետի, հայտնել էր, որ նախկինում ևս ձեռնարկվել են համապատասխան միջոցներ գրությամբ նշված խնդիրները բացառելու ուղղությամբ, մասնավորեցնելով, որ նման երևույթների հայտնաբերման դեպքում օրենքով նախատեսված կարգով կիրառվել են ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 37-րդ և 247-րդ հոդվածների դրույթները և հարուցված վարչական վարույթները կարճվել են: Վարչական իրավախախտման վերաբերյալ գործերի վարույթները կարճվում են նաև այն դեպքերում, երբ հարկ վճարողի/համապատասխան պաշտոնատար անձանց/ արարքում բացակայում է մեղքը:

Մինչդեռ, հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի 2015 թվականի ընթացքում կայացված որոշումների բովանդակության ուսումնասիրությամբ պարզվում է, որ առկա են բազմաթիվ դեպքեր, երբ իրավախախտման շրջանակներում հարուցված վարույթների շրջանակներում նշված հարցերը կարգավորում չեն ստացել և կարգավորվել են միայն վերադասության կարգով բողոքարկման դեպքերում՝ հանձնաժողովի կողմից կայացված որոշումներով: Կարծում ենք, որ հարկային մարմինը հնարավորինս պետք է զերծ պահի հարկ վճարողներին բողոքարկման ընթացակարգերին անտեղի մասնակցությունից բոլոր այն դեպքերում, երբ խնդիրը հնարավոր է կարգավորել մինչ բողոքարկման փուլերում:

Ելնելով վերոշարադրյալից և հաշվի առնելով այն, որ կազմակերպությունը նման հարցերի ընդհանրական կարգավորման կողմնակիցն է, խնդրում ենք Ձեր աջակցությունը և համապատասխան հանձնարարականը վերը նշված խնդիրների կարգավորման հարցում:

Հարգանքով՝

Հ/Կ նախագահ

Փ. Թադևոսյան